

Երկրորդն է՝ նախկին սեպհականութիւն Ռաիպէյ Սթոուայի, որ այժմ գտնւում է Զիկադոյի Համալսարանի մատենադարանում, որի ուսումնասիրութիւնը տպեցինք «Հայաստանեայց Եկեղեցի»-ի մէջ (Մայիս 1940) եւ այժմ արտատպւում է առանձին սոյն պրակի մէջ:

Երրորդը գտնւում է Կալիֆորնիայում մասնաւոր սեպհականութիւն Պ. Վ. Սիմօնեանի:

Զեռադիրը աւետարան է, մագաղաթ, տարաբաղդարար վատ պահուած, տեղ տեղ թրջուելուց սեւացած կամ փտած եւ ուղկաս տեղերը թղթով նորոգած. արեւելեան հին բոլորգրով, որ ուրիշները անցման երկաթագիր են անուանել: Մեր ձեռագիրները մէջ արեւելեան բոլորգիրը, նոյնչափ հին է, որչափ եւ խոշոր կամ միջին երկաթագիրը. արեւելեան բոլորգիր ենք անուանում, որովհետեւ ունի Կիրիկեան բոլորգրի բնորոշ գրերը, ինչպէս եռամատ ա-ը, յ-ն, ց-ն եւն.: Այս ուրեմն նա անցման գիր է, այլ հայ գրի մի տեսակը: Արեւելքում գրուած շատ ձեռագիրներ, յատկապէս ճառքները այդ գրով են գրուած: ԺԳ. եւ յետագայ դարերում միայն սկսում է իշխող դառնալ Կիրիկեան բոլորգիրը, որ մեր ներկայ տպագրութեան տառերն են: Գրիչը Իգնատիոսն է, յիշատակարանների համաձայն. Ղուկասի եւ Յովհաննու սկզբնաղարդների կամարների տակ եղած փոքր երկաթագրով յիշատակարանները ճիշդ նոյն գիրն են, ինչ որ նոյն գրչի էջմ.-ի թիւ 879/928 ն.ց. ձեռագրի հատկոտորը: Բայց Իգնատիոսն է անկասկած, նաեւ նկարիչը, ի նկատի ունենալով դարձագրութեան եւ նկարների առանձնաշատկութիւնները: Լուսանցքի դարգերից շատերը յիշեցնում են Բագնայրի աւետարանը, միայն աւելի փոքր գիրքով: Նոյնը կարող ենք ասել եւ աւետարանների սկզբնաղարդների մասին: Տէրունական պատկերներ չունինք այս ձեռագրի մէջ, իսկ աւետարանիչներից կտրուած են Մատթէոս եւ Մարկոս: Մնացած են միայն Ղուկաս եւ Յովհաննէս իրենց սկզբնաղարդերով. Պատկ. 5 եւ 6: Պատկերագրութիւնը յիշեցնում է միանգամայն Նոր Զուղայի աւետարանը. դէմքերը նուրբ եւ թեթեւ կարմրացրած այտերով: Նուրբ է եւ համեմատաբար լաւ պահուած Պրոխորոն պատանին: Պատկերի ամբողջութիւնը, այսինքն աւետարանիչը, Պրոխորոնի նստուած-

քը, աղանակերպ հոգու սաւառնումը, եւ Աստուծոյ աջից եկած ճառագայթները իրենց դասաւորութեամբ եւ ձեւակերպութեամբ բոլորովին նման Նոր Զուղայի աւետարանին, համեմատելի Պ. Քիւրտեանի հրատարակութեան հետ, որ չենք երկրորդում:

Ստացողն է Խաչատուր ոմն, որի մասին տեղեկութիւն ենք ստանում յիշատակարանից, ինչպէս եւ Իգնատիոսի մասին: Կան եւ ուշ ժամանակի յիշատակարաններ:

Դ.

Գրչութեան ժամանակի յիշատակարաններն են եւ բնագրի գրով.

Ա. Մարկոսի վերջում.

— Ով անարատ գառինք անարատ հարսին եւ մանկունք նոր սիրովնի յորժամ զմայլիք կենսատու աւետարանաւս զսակաւ աշխատողս յիշեցէք առաջի սուրբ եւ անբիծ խորհրդոյն եւ ասիցէք թէ տր ած ողորմեսցի Խաչատրոյ եւ իւր ննջելոցն. ամէն.

Բ. Ղուկասի սկզբնաղարդի կամարի տակ, փոքր, գեղեցիկ երկաթագրով, տես պատկ. 5.

— Զիգնատիոս մեղաւոր ոսկենկար սր աւետարանիս յիշեա ի սր յաղաթս քո ով տր իմ.

Գ. Ղուկասի վերջում.

— Ով մայր լուսոյ եւ բերկրանաց ածածին միշտ կոյս, ընկալ զաւետարանութիւն որդոյ քո միածնի...* ի Խաչատրոյ որպէս միածին որդին քո զայլուսն խերելին (s!), եւ ողորմութիւն արա մեղ ի վերջին աւուրն. (պատկ. 7):*

Դ. Յովհաննու սկզբնաղարդի եռակամարի տակ.

— Զստացող սր աւետարանիս...** եւ զիգնատիոս մեղաւոր նկարիչ յիշեսցիք ի տր աղաչեմ.

Ե. Երկրորդ ստացողի յիշատակարան, Մարկոսի վերջում, բոլորգրով, թանաքը խոնացած.

— Ով դասք լուսերամից եւ երկնահան...

*Պատկեր 7. Յիշատակարանի բովանդակութիւնից երեւում է, որ աւետարանի ստացողները երկու հոգի պիտի լինէին, բայց յետոյ քերտած է առաջին անունը:

**Երկու կարն տողը ջնջուած, կարդացւում է վերջին բառը «սպասաւոր»: